

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2012թ. կամ եկող տարի

Սույն թարգմանությունը պատվիրված է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների տրաստային հիմնադրամի աջակցությամբ (www.coe.int/humanrightstrustfund): Դատարանը թարգմանության համար պարտավորություն չի ստանձնում: Այլ տեղեկությունների համար տես սույն փաստաթղթի վերջում հեղինակային իրավունքի մասին ամբողջական նշումը:

© Council of Europe/European Court of Human Rights, 2012. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court. For further information see the full copyright indication at the end of this document.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2012. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour. Pour plus de renseignements veuillez lire l'indication de copyright/droits d'auteur à la fin du présent document.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

ԳԱՐԴԵԼՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԸ

Դիմում թիվ 16428/05

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2009Թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

17/03/2010

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի
համաձայն: Այն ենթակա է խմբագրական վերանայման:

Գարդելն ընդդեմ Ֆրանսիայի գործում

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը /հինգերորդ ստորաբաժանում/, նիստ գումարելով որպես պալատ և կազմված լինելով.

Փիր Լորենցենից /նախագահ/, դատավորներ Ռենատե Յեգերից, Ժան-Փոլ Կոստայից, Ռայթ Մարուստեսից, Մարկ Վիլլիգերից, Իգաբել Բերրո-Լեֆեվրից, Միրյանա Լազարովա Տրայկովսկայից և ստորաբաժանման քարտուղար Կլաուդիա Վեստերդիկից, 2009թ. նոյեմբերի 4-ին դռնփակ նիստում խորհրդակցելուց հետո կայացրեց այդ օրն ընդունված հետևյալ վճիռը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործն սկսվել է ընդդեմ Ֆրանսիայի Հանրապետության թիվ 16428/05 հայցադիմումի հիման վրա, որը Դատարան էր ներկայացվել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոնվենցիայի /"Կոնվենցիա"/ 34-րդ հոդվածի հիման վրա՝ Ֆրանսիայի քաղաքացի պրն. Ֆաբրիս Գարդելի կողմից /"գանգատարկու"/, 2005թ. ապրիլի 30-ին:
2. Դիմողին, ում իրավաբանական օգնություն էր ցուցաբերվել, ներկայացնում էր Նանսիում փաստաբանական գործունեությամբ զբաղվող փաստաբան պրն. Պ. Սուշալը: Ֆրանսիայի կառավարությունը /"Կառավարություն"/ ներկայացնում էր պաշտոնյա, Արտաքին գործերի նախարարության իրավական հարցերի գծով տնօրեն տկն. Է. Բելյարը:
3. Դիմողը, մասնավորապես, բողոքում էր իրեն դատապարտելուց հետո սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց ազգային ցանկում ընդգրկելու դեմ: Նա հիմնվում էր Կոնվենցիայի 7-րդ հոդվածի վրա:
4. 2007թ. հոկտեմբերի 1-ին Դատարանը որոշեց կառավարությանը ծանուցել այդ հայցադիմումի մասին: Նաև որոշվեց միաժամանակ որոշում կայացնել հայցադիմումի ընդունելի լինելու և էության մասին /29-րդ հոդված, կետ 3/:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմողը ծնվել է 1962թ., ներկայումս գտնվում է Մոնմեդիի բնտնում:
6. 1997թ. փետրվարի 18-ին մի երիտասարդ աղջկա՝ Ս-ի ծնողների ներկայացրած բողոքից հետո դիմողին մեղադրանք ներկայացվեց ղեկավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից բռնաբարության և տասնհինգ տարին չլրացած անչափահասի նկատմամբ սեռական բնույթի հարձակման համար:
7. Քննության ժամանակ Գարդելը մի քանի անգամ պահանջել է, որպեսզի ձեռնարկվեն լրացուցիչ քննչական միջոցներ, որոնք մերժվել էին քննչական մարմինների կողմից:
8. 2003թ. ապրիլի 15-ին դատաքննություն վարող դատավորը Բար-լը-Դյուկի վերին ատյանի դատարանում հրաման արձակեց սեռական բնույթի հարձակման մասով վարույթը դադարեցնելու վերաբերյալ, քանի որ

վաղեմության ժամկետն անցել էր: Դատավորը դիմողին նախնական կալանքի վերցրեց տասնհինգ տարին չլրացած անչափահասին տուժածի նկատմամբ իշխանություն ունեցող անձի կողմից բռնաբարելու մեղադրանքով:

9. 2003թ. հոկտեմբերի 30-ին Մեզ Ասիզի դատարանը դիմողին դատապարտեց տասնհինգ տարվա ազատազրկման և տասը տարով նրան զրկեց իր բոլոր քաղաքացիական, քաղաքային և ընտանեկան իրավունքներից:
10. Դիմողն այդ որոշումը չի բողոքարկել, սակայն մի շարք փաստաթղթերով հանդերձ ներկայացրել է գործի կրկնական լսման դիմում: Այդ փաստաթղթերը, ըստ նրա հայտարարության, իր մեղքը կասկածի տակ են դնում:
11. 2004թ. մարտի 9-ին թիվ 2004-204 օրենքով հաստատվեց սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց ազգային պաշտոնական ցուցակը /Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակ"/:
12. 2005թ. ապրիլի 11-ին Քրեական գործերի վերանայման խորհուրդը մերժեց գործի կրկնական լսման մասին գանգատարկուի դիմումը:
13. 2005թ. փետրվարի 28-ին դիմումատուն դիմեց Կրետեյի պատիժների նշանակման դատարան, որպեսզի իր վճիռը կասեցվի: 2005թ. հունիսի 17-ին դիմումը մերժվեց այն հիմքերով, որ, ըստ դատական բժշկների զեկույցի՝ “գանգատարկուի վերապրումը կասկածի ենթակա չէ, ոչ էլ նրա առողջական վիճակն է անհամատեղելի կալանքի երկար ժամկետի հետ, ուստի ինչպես..., նա չի բավարարում Քրեական դատավարության օրենսգրքի 720-1-1-րդ հոդվածի պահանջներին, և խնդրո առարկա միջոցը նրա համար չէ”: Դատարանը մատնանշել էր, որ դիմողը պատիժը պետք է կրի մինչև 2019թ. մայիսի 27-ը, իսկ նրա դատվածությունների գրանցման մեջ նշված էր ևս մեկ դատվածություն՝ պաշտոն զբաղեցնողի կողմից տասնհինգ տարին չլրացած անչափահասի նկատմամբ սեռական բնույթի ոտնձգության համար /վեց տարվա ազատազրկում և դատական ու հասարակական վերահսկողության վերաբերյալ հրաման, որն արձակել էր Նանսիի վերաքննիչ դատարանը 2002թ. օգոստոսի 29-ին՝ անչափահասի նկատմամբ կատարված սեռական բնույթի հարձակման համար/: Դատարանը նաև հաշվի առավ բժշկական եզրակացությունները, որոնց համաձայն դիմողը տառապում է սրտի բնածին արատով, որն անհնարին է դարձնում ցանկացած ֆիզիկական ակտիվություն: Եզրակացություններով պաշտպանվում էր այն հանգամանքը, որ նրան պետք է տեղավորել խիստ ռեժիմի բանտի առանձին խցում, առանց զբոսանքի կամ ֆիզիկական ակտիվության, աղից զերծ սննդակարգով և կանոնավոր կերպով դեղեր ընդունելով: Դատարանը նաև հղում էր անում 2004թ. նոյեմբերին հոգեբույժի եզրակացությանը, ըստ որի գանգատարկուի հոգեբանական զարգացումը “չափազանց սահմանափակ է, այնքանով, որքանով որ նա չի կարողացել խորհել իր սեփական վարքի շուրջ: Նա մեղքի կամ պատասխանատվության որևէ զգացում չունի այն հանցանքների համար, որոնց կատարումը ժխտում է: Պսիխոթերապիայի կուրսը նրան կօգնի

ապագայում ավելի բավարար փոխհարաբերություններ զարգացնելու այն մարդկանց հետ, ում հետ նա կշփվի”:

14. 2005թ. հոկտեմբերի 13-ին Փարիզի վերաքննիչ դատարանի հետազատագրկման բաժինն այս վճիռը պաշտպանեց:

15. 2005թ. նոյեմբերի 22-ին դիմողին Լը Էյ-լե-Ռոզի ոստիկանական բաժանմունքի պաշտոնյան տեղեկացրեց, որ նրա անունը՝ հաշվի առնելով Մեզ Ասիզի դատարանի կողմից ազատագրկման փաստը, մտցվում է Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակի մեջ՝ 2004թ. մարտի 9-ի վերոնշյալ օրենքի անցումային դրույթների համաձայն: Պաշտոնական ծանուցումը ձևակերպված էր հետևյալ կերպ՝

“Ես՝ ներքոստորագրյալ պրն. Ֆաբրիս Գարդելս, սույնով ընդունում եմ, որ այսօր ծանուցվել եմ այն մասին, որ ինձ ներառել են Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակում Մեզ Ասիզի դատարանի կողմից 2003թ. հոկտեմբերի 30-ին բանտարկության դատապարտելու պատճառով, և որ Քրեական դատավարության օրենսգրքի 706-53-5-րդ հոդվածով ինձնից պահանջվում է.

1. ներկայացնել իմ հասցեի ապացույցները...

տարեկան մեկ անգամ կամ պաշտոնական ցուցակը վարող մարմնին՝ Արդարադատության նախարարությանը... կամ իմ վայրի ոստիկանական կամ ժանդարմերիայի բաժանմունք..., կամ իմ ծննդյան ամսվա ընթացքում կամ էլ հունվար ամսին, եթե իմ ծննդյան օրն անհայտ է կամ հաստատված չէ:...

Ես հստակ կերպով հաստատում եմ, որ իրազեկվել եմ առ այն, որ՝

վերջնականապես դատապարտվել եմ տասը կամ ավելի տարի ազատագրկում նախատեսող հանցագործության համար: Համապատասխանաբար ինձնից պահանջվում է ներկայացնել իմ հասցեն հաստատող ապացույց՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անձամբ ներկայանալով:

...

Ես հաշվի եմ առնում այն փաստը, որ երկրից մեկնելու դեպքում անձամբ ներկայանալու իմ պարտավորությունը կասեցվելու է արտերկրում գտնվելու ժամկետով, սակայն ես պետք է շարունակեմ իմ հասցեի վերաբերյալ ապացույցը ներկայացնել պատվիրված նամակով՝ Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակը վարող մարմնին գրանցված առաքումով, ... որին կցված են լինելու իմ հասցեն հավաստող փաստաթղթերը՝ ստորագրված տեղի հյուպատոսության կողմից:

2. ամենաուշը տասնհինգ օրվա ընթացքում նույն կարգով հայտարարել հասցեի ցանկացած փոփոխության մասին:

Ես հաստատում եմ, որ իրազեկվել եմ՝

ա/ որ պետք է առաջին անգամ սույն ծանուցագիրն ստանալուց հետո տասնհինգ օրվա մեջ ապացույցներ ներկայացնեմ իմ հասցեի վերաբերյալ, եթե

այն տրված չէ վերը նշված՝ իմ ծննդյան ամսվա առաջին օրվան նախորդող երկու ամսից պակաս ժամանակահատվածում, կամ ինձնից արդեն իսկ պահանջվել է տարեկան կտրվածքով հասցեիս վերաբերյալ ներկայացնել ապացույցներ.

բ/ որ այդ պարտականությունները չկատարելու դեպքում ես կպատժվեմ երկու տարի բանտարկությամբ և 30,000 եվրո տուգանքով.

գ/ որ այդ պարտականությունների որևէ խախտում կհանգեցնի դատական մարմինների և ոստիկանության կամ ժանդարմերիայի կողմից տազնապի հնչեցման, որի արդյունքում ինձ կներառեն փնտրվող անձանց պաշտոնական ցուցակում, և կիրականացվի քրեական հետապնդում.

դ/ որ 53-8-13 R հոդվածի համաձայն 706-53-5 հոդվածով նախատեսված հասցեի վերաբերյալ ապացույցներն ու հասցեի փոփոխության վերաբերյալ հայտարարությունը պետք է լինեն իմ անունով և երեք ամսից պակաս վաղեմությամբ փաստաթղթի տեսքով, որով ապացուցվում է իմ տան հասցեն, օր.՝ հաշիվ կամ ապրանքագիր.

ե/ որ եթե ներկայացված փաստաթղթում վկայակոչված է այլ անձի հասցե, ապա դրան պետք է կցված լինի վերջինիս կողմից գրված ու ստորագրված հայտարարությունն առ այն, որ ես մնում եմ այդ հասցեում:

Ես լրացուցիչ հաստատում եմ, որ իրազեկվել եմ ստորև բերվող իմ իրավունքների մասին՝

ա/ Տվյալների պաշտպանության օրենքի և 706-53-9 հոդվածի հիման վրա ես կարող եմ ստանալ պաշտոնական ցուցակում ինձ վերաբերող բոլոր տեղեկությունների մեկ օրինակ՝ դիմելով այն դատախազին, ում շրջանում ես բնակվում եմ.

բ/ եթե պաշտոնական ցուցակում ինձ ընդգրկելու հիմքը կազմող որոշումը տրվել է արտերկրի դատական մարմնի կողմից, ես կարող եմ դիմել Նանտի վերին ատյանի դատարանի դատախազին, որպեսզի ցուցակում ներառված տեղեկություններն ուղղվեն, հանվեն կամ ներկայանալու հաճախականությունը կրճատվի և դառնա տարեկան մեկ անգամ՝ R 53-8-27 և հետևյալ հոդվածի համաձայն”:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

16. Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց ազգային պաշտոնական մեքենայացված ցուցակը /”Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակ” – FIJAIS/, որն ստեղծվեծ է 2004թ., քրեական նույնականացման ցուցակ է, որը նման է մատնահետքերի ազգային շտեմարանին՝ FAED, ազգային գենետիկական

շտեմարանին՝ FNAEG և քրեական հաշվառման ազգային արխիվին՝ CJN: Վերջինս ունի ամենաերկար պատմությունը: 2009թ. մարտի 24-ին Ազգային ժողով ներկայացված ոստիկանական ցուցակների վերաբերյալ տեղեկատվական նյութում նշված էր, որ այդպիսի ցուցակների թիվն ավելացել է: Աշխատանքային խումբը, որը նախագահում էր պրն. Ալեն Բաուերը, նշել է, որ 2008թ. դրանց թիվը կազմել է 45՝ համեմատած 2006թ. հետ, երբ դա եղել է 34, իսկ մեկ տասնյակ կամ մոտ այդքան սարերի հետևում չեն:

Արդարադատության նախարարությունը պատասխանատու է և վարում է Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակը: Այն պահվում է Նանտում գտնվող Քրեական հաշվառման ազգային դեպարտամենտում՝ քրեական հաշվառման ազգային արխիվի համար պատասխանատու դատավորի հսկողության ներքո:

Ա. Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակը

17. Սեռական բնույթի կամ բռնի հանցագործություն կատարած անձանց ազգային պաշտոնական մեքենայացված ցուցակն ստեղծվել է քրեական հանցագործությունների փոփոխվող միտումներին արդարադատության համակարգի հարմարեցման մասին 2004թ. մարտի 9-ի թիվ 2004-204 օրենքով: Այն միտված է կանխելու սեռական բնույթի կրկնվող հանցագործությունները՝ դուրացնելով հանցագործների նույնականացումը և հնարավորություն տալով ցանկացած ժամանակ արագորեն գտնել նրանց հետքը: Մի շարք անդրազգային միջոցներ ամրագրում են ցուցակում այն անձանց ներառման մանրամասն պայմանները, ովքեր այդպիսի հանցանք են գործել մինչև վերը նշված օրենքի ընդունումը: Դրույթները կիրառվում են այն անձանց նկատմամբ, ովքեր այդպիսի հանցանքներ են գործել մինչև օրենքի հրապարակման օրը, սակայն այդ օրվանից հետո դարձան Քրեական դատավարության օրենսգրքի 706-53-2 հոդվածում վկայակոչված որոշումներից մեկի առարկան /տես ստորև բերվող 18 կետը/: Դրանք դատախազի պահանջով կարող են կիրառվել նաև այն անձանց նկատմամբ, ովքեր մինչև օրենքի հրապարակումը ազատազրկմամբ պատիժ էին կրում:

1. Քրեական դատավարության օրենսգիրքը /ՔԴՕ/

18. ՔԴՕ-ի համապատասխան դրույթներն ասում են.

Հոդված 706-47

“Սույն վերնագրի դրույթները կիրառվում են այն հայցերի դեպքում. որոնք վերաբերում են անչափահասի կանխամտածված կամ չկանխամտածված սպանությանը, որին նախորդել կամ ուղեկցել է բռնաբարությունը, խոշտանգումը կամ բարբարոսական գործողությունները կամ անչափահասի վրա սեռական բնույթի հարձակման կամ նրա նկատմամբ սեռական բռնության, անչափահասի անբարո

վաստակով ապրող կամ նրան սեռական բնույթի ծառայությունների համար վճարելու հանցագործություններին ...

Սույն դրույթները պետք է կիրառվեն նաև այն հայցերի դեպքում, որոնք վերաբերում են սպանության հանցագործությանը՝ լինի դա կանխամտածված կամ ոչ, որն ուղեկցվել է խոշտանգումներով կամ բարբարոսական գործողություններով, խոշտանգումների հանցագործությանը կամ բարբարոսական գործողություններին և սպանության հանցագործությանը՝ լինի դա կանխամտածված թե ոչ, որոնք գործվել են որպես կրկնակի հանցագործություն”:

Հոդված 706-53-1

“Մեռական բնույթի կամ բռնության գործադրմամբ հանցագործություններ կատարողների ազգային մեքենայացված ցուցակը կազմում է Հանցագործությունների և հանցագործների գրանցման դեպարտամենտի կողմից պահվող անձնական տեղեկությունների շտեմարանը՝ Արդարադատության նախարարության իրավագործության և դատավորի վերահսկողության ներքո: 706-47 հոդվածով նախատեսված կրկնահանցագործությունները կանխարգելելու և դրանք կատարողների նույնականացումը դյուրացնելու նպատակով 706-53-2 հոդվածում վկայակոչված տեղեկությունները պետք է հավաքվեն, կուտակվեն ու փոխանցվեն լիազորված անձանց սույն գլխում ամրագրված պայմանների համաձայն”:

Հոդված 706-53-2

“Սույն հոդվածի վերջին կետի դրույթներին ենթակա և, այնքանով, որքանով որ դրանք վերաբերում են 706-47 հոդվածում վկայակոչված մեկ կամ ավելի հանցագործությունների, անհատի ինքնության և տան հասցեի կամ հերթական հասցեի մանրամասները և, որտեղ կիրառելի է, բնակության այլ վայրերը պետք է ներառվեն ցուցակի մեջ, որտեղ քննարկվող անհատը եղել է ստորև բերվող թեմաների առարկան՝

1. վերջնական կամ ոչ վերջնական դատապարտումը, ներառյալ հեռակա դատապարտումը կամ մեղքի ճանաչումը, որն ուղեկցվում է նրան ազատազրկումից ազատելու կամ ազատազրկումը հետաձգելու մասին հրամանով.
2. Անչափահասների իրավախախտումների մասին 1945թ. փետրվարի 2-ի թիվ 45-174 հրամանագրի 8-րդ, 15-րդ, 15-1, 16-րդ, 16-2 և 28-րդ բաժինների հիման վրա տրված որոշում՝ լինի դա վերջնական թե ոչ.
3. սույն օրենսգրքի 41-2 հոդվածով նախատեսված տուգանքների սահմանված համակարգ, որի կատարումը հավաստվել է դատախազի կողմից.
4. Քրեական օրենսգրքի 122-1 հոդվածի առաջին կետի հիման վրա քննարկվող անձի նկատմամբ վարույթը դադարեցնելու, պատասխանատվությունից ազատելու կամ արդարացնելու վերաբերյալ որոշում.

5. քրեական մեղադրանք՝ ուղեկցված դատարանի վերահսկողության հրամանով, որում դատաքննությունն վարող դատավորը կարգադրել է որոշումը մտցնել ցուցակի մեջ.
6. վերը նշվածների նման որոշում, որը կայացվել է արտերկրի դատարանի կամ դատական մարմնի կողմից և միջազգային կոնվենցիայի կամ պայմանագրի պայմանների հիման վրա ծանուցվել է ֆրանսիական իշխանություններին կամ ի կատար է ածվել Ֆրանսիայում դատապարտվածին փոխանցելուց հետո:

Ցուցակում պետք է տեղեկություններ լինեն ցուցակում ներառելու հիմքերը կազմող դատական որոշման և հանցագործության բնույթի վերաբերյալ: 1-ին և 2-րդ կետերում վկայակոչված որոշումները պետք է ցուցակում ներառվեն դրանք կայացնելուն պես:

706-47 հոդվածում վկայակոչված հանցագործություններին վերաբերող որոշումները, որոնցով սահմանված է հինգ կամ պակաս տարի բանտարկության դատավճիռ, ցուցակում չպետք է ներառվեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կա դատարանի, կամ 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում դատախազի հստակ կարգադրությունը”:

Հոդված 706-53-4

“Առանց վնասելու 706-53-9 և 706-53-10 հոդվածների դրույթների կիրառությունը՝ 706-53-2 հոդվածում վկայակոչված և անհատին վերաբերող տեղեկությունները պետք է հանվեն ցուցակից խնդրո առարկա անձի մահվան կամ ստորև ամրագրված ժամկետներն սպառվելու դեպքում՝ սկսած այն օրվանից, երբ ցուցակում ներառված բոլոր որոշումները դադարում են ուժի մեջ լինելուց՝

1. երեսուն տարի լուրջ հանցագործությունների կամ խոշոր հանցանքի դեպքում, որոնք պատժվում են տասը տարվա բանտարկությամբ.
2. մնացած բոլոր դեպքերում՝ քսան տարի ժամանակով:

Խնդրո առարկա տեղեկատվությունը համաներման կամ արդարացման արդյունքում կամ քրեական դատվածությունների հաշվառումից դատապարտումը հանելուն վերաբերող կանոնների համաձայն չպետք է հանվի: Տեղեկատվությունն ինքնին չի կարող օգտագործվել որպես կրկնահանցագործության ապացույց:

706-53-2 հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերի համաձայն ցուցակում ներառված տեղեկատվությունը չպետք է ցուցակից հանվի դատավարությունը դադարեցնելու վերաբերյալ վերջնական որոշման, իրավունքների վերջնական վերականգնման կամ վերջնական արդարացման դեպքում: 5-րդ կետով ցուցակում ներառված

տեղեկատվությունը նույնպես պետք է հանվի դատարանի վերահսկողության հրամանի դադարեցման կամ այն հանելու դեպքում”:

Հոդված 706-53-5

“Բոլոր այն անձինք, ում ինքնությունը գրանցված է ցուցակում, որպես անվտանգության միջոց, պետք է ենթարկվեն սույն հոդվածում ամրագրված պարտավորություններին:

Շահագրգիռ անձից պահանջվում է ցուցակը վարող մարմնին ուղղված՝ պատվիրված և առաքումը գրանցված նամակով կամ տեղի ոստիկանության կամ ժանդարմերիայի բաժանմունքին ուղղված՝ պատվիրված և առաքումը գրանցված նամակով, կամ էլ անձամբ ներկայանալու միջոցով՝

1. տարին մեկ անգամ ներկայացնել իր հասցեի ապացույցը.
2. ամենաուշը տասնհինգ օրվա ընթացքում հայտարարել հասցեի ցանկացած փոփոխության մասին:

Եթե շահագրգիռ անձը վերջնականապես դատապարտվել է լուրջ հանցագործության կամ տասը տարվա բանտարկություն նախատեսող խոշոր հանցագործության համար, նա պետք է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ներկայացնի հասցեի ապացույց՝ ներկայանալով տեղի ոստիկանության կամ ժանդարմերիայի բաժանմունք կամ իր բնակության վայրի ժանդարմերիայի կամ ոստիկանության կենտրոնակայան, կամ էլ պրեֆեկտուրայի նշանակված որևէ դեպարտամենտ:

Սույն հոդվածում ամրագրված պարտավորությունների չկատարումը պատժվում է երկու տարվա բանտարկությամբ և 30,000 եվրո տուգանքով:

Հոդված 706-53-6

“Որևէ անձ, ում ինքնությունը ցուցակում գրանցված է, պետք է համապատասխանաբար տեղեկացվի դատական մարմնի կողմից՝ կամ անձամբ կամ էլ վերջին հաղորդված հասցեով պատվիրված նամակի միջոցով:

Այդ առիթով շահագրգիռ անձը պետք է տեղեկացվի 706-53-5 հոդվածով նախատեսված իր պարտականությունների և դրանք չկատարելու դեպքում սահմանված պատիժների մասին:

Եթե շահագրգիռ անձը գտնվում է կալանքի տակ, սույն հոդվածով նախատեսված տեղեկատվությունը պետք է տրամադրվի նրա վերջնական ազատ արձակման դեպքում կամ դատավճռի պայմանները թուլացնելու առաջին միջոցառումից առաջ:

Հոդված 706-53-7

2008թ. փետրվարի 25-ի թիվ 2008-174 օրենքի 15-րդ բաժնի արված փոփոխություններով հանդերձ

“Ցուցակում պարունակվող տեղեկատվությունը պետք է հեռահաղորդակցության ապահով համակարգի միջոցով անմիջականորեն հասանելի լինի՝

1. դատական մարմիններին.
2. քրեական գործերով ոստիկանությանը՝ միտումնավոր կերպով մարդու կյանքը վտանգող հանցագործությունների, առևանգման կամ 706-47 հոդվածում հիշատակված հանցագործություններից մեկի վարույթի համատեքստում և 706-53-5 ու 706-53-8 հոդվածներով նախատեսված միջոցները ձեռնարկելու նպատակով.
3. պրեֆեկտներին և 706-53-12 հոդվածով նախատեսված հրամանագրում նշված պետական վարչական մարմիններին՝ անչափահասների հետ շփումներին վերաբերող գործունեության կամ մասնագիտությունների համալրման, պաշտոնի նշանակման, լիազորության, հաստատման կամ թույլտվության և այդ գործունեության կամ մասնագիտությունների իրականացումը վերահսկելու նպատակով...
4. Ցուցակում տեղ գտած տեղեկությունները պետք է նաև հասանելի լինեն քաղաքապետերին, պրեֆեկտների միջոցով՝ դեպարտամենտների խորհուրդների և տարածաշրջանային խորհուրդների նախագահներին՝ 3-րդ կետում հիշատակված վարչական որոշումների նպատակներով, որոնք վերաբերում են անչափահասների հետ շփումներին վերաբերող գործունեությանը և մասնագիտություններին՝ այդ գործունեության կամ մասնագիտությունների իրականացումը վերահսկելու համար”:

Հոդված 706-53-8

“706-53-12 հոդվածով նախատեսված հրամանագրում նշված կարգով ցուցակը վարող մարմինը պետք է Ներքին գործերի նախարարությանն անմիջապես տեղեկացնի ցուցակում որևէ նոր գրառման, հասցեի փոփոխության կամ այն մասին, որ ցուցակում ներառված անձը սահմանված ժամկետում չի ներկայացրել իր հասցեի մասին ապացույցներ: Նախարարությունը պետք է անհապաղ այդ տեղեկություններն ուղարկի իրավասու ոստիկանական կամ ժանդարմերիայի բաժանմունք:

Ոստիկանությունը կամ ժանդարմերիան կարող են անցկացնել համապատասխան բոլոր ստուգումներն ու հայտ ներկայացնել պետական մարմիններին անհրաժեշտ պահանջով՝ նպատակ ունենալով ստուգել այդ անձի հասցեն կամ հետևել դրան:

Եթե հայտնի է դառնում, որ շահագրգիռ անձն այլևս չի ապրում նշված հասցեում, ապա դատախազը պետք է նրա անունը մտցնի փնտրվող անձանց ցուցակի մեջ”:

Հոդված 706-53-9

“Այն անձանց, ովքեր ներկայացնում են իրենց ինքնության ապացույցը, իրենց բնակության վայրում գտնվող վերին ատյանի դատարանում դատախազին հղված դիմումի համաձայն պետք է տրվի իրենց մասին ցուցակում եղած ամբողջ տեղեկատվությունը”:

Հոդված 706-53-10

2007թ. մարտի 5-ի օրենքի փոփոխություններով հանդերձ

“Այն անձինք, ում ինքնությունը գրանցված է ցուցակում, կարող են դատախազից պահանջել ուղղել կամ կարգադրել ոչնչացնել իրենց մասին տեղեկատվությունը, եթե այն ճշգրիտ չէ կամ այլևս պետք չէ դա պահպանել՝ նկատի ունենալով ցուցակի նպատակը, հանցագործության բնույթը, շահագրգիռ անձի տարիքը, երբ դա տեղի է ունեցել, անցած ժամանակահատվածը և շահագրգիռ անձի ներկա անհատականությունը:

Ոչնչացման ենթակա տեղեկատվության վերաբերյալ պահանջն անընդունելի է, եթե խնդրո առարկա տեղեկատվությունը, որը 2007թ. մարտի 5-ի օրենքի 43-րդ բաժնով ուժը կորցրած է ճանաչվել, “մնում է շահագրգիռ անձի քրեական դատվածության թիվ 1 տեղեկագրում” կամ վերաբերում է այն դատավարություններին, որոնք դեռևս անավարտ են /2007թ. մարտի 5-ի 2007-297 օրենքի 43-րդ բաժին, այնքանով, որքանով որ շահագրգիռ անձը չի արդարացվել կամ ցուցակում ներառելու պատճառ դարձած միջոցը թիվ 1 տեղեկագրից չի հանվել”:

Եթե դատախազը չի կարգադրում ուղղել կամ ոչնչացնել տեղեկատվությունը, շահագրգիռ անձը կարող է այդ նպատակով դիմել ազատությունների և կալանավորման գծով դատավորին: Վերջինիս որոշման դեմ բողոքը ներկայացվում է հետաքննության բաժնի ղեկավարին:

Մինչ տեղեկատվությունն ուղղելու կամ ոչնչացնելու պահանջի վերաբերյալ որոշում ընդունելը՝ ազատությունների և կալանավորման գծով դատավորը և հետաքննության բաժնի ղեկավարը կարող են կարգադրել, որպեսզի կատարվեն ըստ իրենց անհրաժեշտ ստուգումներ, ներառյալ շահագրգիռ անձի բժշկափորձագիտական եզրակացությունը: Եթե ցուցակի տեղեկատվությունը վերաբերում է լուրջ հանցագործություն կամ տասը տարի բանտարկություն նախատեսող խոշոր հանցանքի, որը կատարվել է անչափահասի նկատմամբ, այդպիսի փորձագիտական

եզրակացության բացակայության պայմաններում տեղեկատվությունը ոչնչացնելու վերաբերյալ ոչ մի որոշում չի կարող կայացվել...”:

Հոդված 706-53-12

“Սույն գլխի դրույթների կիրարկման մանրակրկիտ պայմանները պետք է ամրագրվեն Պետական խորհրդի հրամանագրով՝ Տվյալների պաշտպանության ազգային հանձնաժողովի հետ խորհրդակցելուց հետո:

Հրամանագրում, մասնավորապես, պետք է նախատեսվեն այն հանգամանքները, որոնցում ցուցակը ներառում է իրեն վերաբերող հարցումները և այն առիթները, երբ դիմել են ցուցակին”:

Հոդված R53-8-34

“Ցուցակում պետք է երեք տարի ժամկետով պահվեն դատական գործի նյութերը՝ գրանցումները և դրանց վերաբերող հարցումները, որոնք մատնանշում են այդ գրանցումը կամ հարցումներն անող անձի կարգավիճակը կամ իրավագործությունը:

Այս տեղեկությունները պետք է հասանելի լինեն միայն ցուցակը վարող դեպարտամենտի պատասխանատու դատավորին կամ այն անձանց, ում նա հստակ թույլտվություն է տալիս:

Վիճակագրական տվյալներ կարելի է հավաքել այս տեղեկությունների հիման վրա”:

2. Սահմանադրական խորհրդի նախադեպային իրավունքը

19. 2004թ. մարտի 2-ի թիվ 2004-492 DC որոշման մեջ Սահմանադրական խորհուրդը պարտավորեցրեց, որ “Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակում անձի ինքնությունը գրանցելը ... նախատեսված է... այսպիսի կրկնվող իրավախախտումները կանխարգելելու և այդ իրավախախտումները կատարած հանցագործների նույնականացումը դյուրացնելու նպատակով: Դրանից հետևում է, որ ցուցակում ներառելը պատժամիջոց չէ, այլ հասարակական կարգի միջոց” /կետ 74/: Բացի այդ, Սահմանադրական խորհուրդը որոշեց, որ ցուցակի մեջ տեղեկություններ մտցնելու, դրա խորհրդատվության, օգտագործման կապակցությամբ առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել ցուցակից օգտվելու և խորհրդակցելու պայմաններով նախատեսված երաշխիքների և այն փաստի վրա, որ անձնական տվյալներ ներառելու կամ դրանք ոչնչացնելու իրավասությունը պատկանում է դատական մարմնին: Երկրորդը՝ իրավախախտումների լրջությունը, որի պատճառով անձնական տվյալները մտցվում են ցուցակի մեջ, և այդ տիպի իրավախախտումների

կրկնության հաճախականությունը, որի վիճարկված դրույթներն այնպիսին են, որ կարգավորեն մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքը և հասարակական կարգը այն ձևով, որպեսզի լինի հստակ նպաստավոր հավասարակշռություն /կետ 87/: Եվ, վերջապես, խորհուրդը որոշում կայացրեց, որ “ցուցակում ներառված անձանց ներկայացվող պահանջն առ այն, որ նրանք պարբերաբար ծանուցեն իրենց տան հասցեի կամ մշտական բնակության վարի հասցեի վերաբերյալ, պատժամիջոց չէ, այլ ավելի շուտ հասարակական կարգի միջոց, որը նպատակ ունի կանխարգելելու իրավախախտման կրկնությունը և դուրացնելու իրավախախտների նույնականացումը: Ցուցակի նպատակն իսկ անհրաժեշտ է դարձնում շարունակաբար ստուգել շահագրգիռ անձանց հասցեները: Նրանց վրա դրված բեռը, որն ապահովում է այդ ստուգումների իրականացումը, 1789թ. Հռչակագրի 9-րդ հոդվածի նպատակների համար ոչ բացարձակ անհրաժեշտ միջոց է...” /կետ 91/:

3. Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքը

20. 2008թ. մարտի 12-ի քրեական բաժնի դատավճռում Վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել ցուցակում անձանց ներառելու բնույթի վերաբերյալ /տես նաև Քր. 2006թ. հոկտեմբերի 31, Քր. Տեղեկագիր թիվ 267/: Կայացված որոշումը հետևյալն է. “Քանի որ... Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակում ներառելու մասին հրաման տալով՝ Վերաքննիչ դատարանը հստակ կերպով կիրարկել է 2004թ. մարտի 9-ի օրենքի 216-րդ բաժինը, որի համաձայն ցուցակում ներառելու վերաբերյալ դրույթները կիրառվում են մինչև օրենքի հրապարակումը կատարված իրավախախտումների նկատմամբ: Սույն բաժինը չի խախտում Կոնվենցիայի այն դրույթները, որոնց վրա հիմնվում են, քանզի Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակում ներառումը, որը զուտ անվտանգության միջոցառում է, այլ ոչ պատժամիջոց, ենթակա չէ այն սկզբունքին, որով արգելվում է նյութական իրավունքի առավել խիստ կիրառությունը...”: Վճռաբեկ դատարանը պաշտպանել է ցուցակում ավտոմատ կերպով ներառելն այն դեպքերում, երբ իրավախախտները դատապարտվել են ավելի քան հինգ տարի բանտարկության /Քր. 2008թ. հունվարի 16/:

4. Ոստիկանության և ժանդարմերիայի գծով աշխատանքային վերահսկիչ խումբը

21. 2008թ. դեկտեմբերին սույն աշխատանքային խումբը զեկույց ներկայացրեց Ներքին գործերի նախարարություն, անդրօվկիանոսյան դեպարտամենտներ և տարածքներ ու տարածքային մարմիններ հետևյալ վերնագրով՝ “Ընթացակարգերի խստացում, որի նպատակն է բարելավել ազատությունների պաշտպանությունը”: Այս զեկույցի համաձայն՝ 2005թ. ստեղծված Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց պաշտոնական ցուցակում կար 20,222 անուն, իսկ 2008թ. հոկտեմբերին՝ արդեն 43, 408:

Բ. Ազգային քրեական ավտոմատացված հաշվառումը

1. Ընդհանուր դրույթներ

22. ՔԴՕ-ի 768-ից մինչև 781-րդ հոդվածները կարգավորում են Ազգային քրեական հաշվառումը: Դրանով գրանցվում են քրեական դատարանների կողմից սահմանված դատապարտումները, ինչպես նաև որոշ առևտրային, վարչական ու կարգապահական դատապարտումներ, որոնք առաջ են բերում անիրավունակություն: Անձի քրեական դատվածությունը բաժանվում է երեք վերնագրի: Հաշվառման մեջ պարունակվող տեղեկատվությունը տրամադրվում է տեղեկագրերի տեսքով:

Թիվ 1 տեղեկագրում /ՔԴՕ-ի 774-րդ հոդված/ գրանցվում են քրեական հաշվառման մեջ պարունակվող բոլոր թղթապանակները, այլ կերպ ասած՝ բոլոր անձանց դատվածությունները: Այն կարող է տրվել միայն դատական մարմիններին:

Թիվ 2 տեղեկագրում /ՔԴՕ-ի 775-րդ հոդված/ պարունակվում է քրեական հանցագործությունների համար դատվածությունների մեծ մասը, բացառությամբ, մասնավորապես, պատանիների դատվածության, արտերկրի դատական որոշումների, մանր իրավախախտումների համար դատապարտումների և փորձաշրջանն անցնելուց հետո պայմանական պատժի: Կարելի է խնդրանքով դիմել դատավորին, որպեսզի դատապարտումը չներառվի թիվ 2 տեղեկագրում, չնայած այն կմնա թիվ 1 տեղեկագրում: Սույն տեղեկագիրը հատուկ հիմքերով հասանելի կլինի միայն որոշ վարչական ու զինվորական մարմինների՝ պրեֆեկտներ, զինվորական մարմիններ, պետական ընկերությունների ղեկավարներ և այլն:

Թիվ 3 տեղեկագրում /ՔԴՕ-ի 775-րդ հոդված/ գրանցվում են խոշոր հանցանքների համար ամենալուրջ դատապարտումները և, հատկապես, երկու տարուց ավելի ժամկետով ազատազրկմամբ պատիժները: Սույն տեղեկագիրը միակն է, որի պատճենը կարող է տրամադրվել շահագրգիռ անձին:

2. Արդարացման գործընթացը

23. Քրեական օրենսգրքում նախատեսված է դատապարտվածների արդարացման ընթացակարգ, որով հնարավորություն է տրվում դատվածությունը քրեական հաշվառումից հանել մինչև օրենքով նախատեսված ժամկետի լրանալը /քառասուն տարի/: Օրենսգրքի 133-1 հոդվածում նշված է, որ արդարացումը մաքրում է դատապարտումը:

24. 133-13 հոդվածում ամրագրված են ավտոմատ արդարացման պայմանները:

Հոդված 133-13

“Դատապարտվածը, ով ստորև ամրագրված ժամանակահատվածում նոր քրեական դատվածություն չի ունեցել, պետք է ավտոմատ կերպով արդարացվի՝

...

3. բանտարկության մեկ դատավճռի դեպքում, որը չի գերազանցում տասը տարին կամ բազմակի դատավճիռների դեպքում, որոնք ընդհանուր առմամբ չեն գերազանցում հինգ տարին, ազատագրվումը ավարտվելուց հետո օրվանից սկսած տասը տարի հետո կամ վաղեմության ժամկետը լրանալու օրվանից սկսած:

...

25. Քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված են դատական արդարացման ընթացակարգը կարգավորող պայմանները:

Հոդված 785, առաջին կետ

“Դատապարտվածի կենդանության ժամանակ արդարացման համար դիմում դատարան կարող է ներկայացվել միայն շահագրգիռ անձի կողմից, իսկ նրա անգործունակ ճանաչված լինելու դեպքում՝ նրա ներկայացուցչի կողմից: Անձի մահվան դեպքում, նաև օրենքով սահմանված պայմանները բավարարելու դեպքում դիմումը կարող է ներկայացվել նրա ամուսնու կամ կնոջ, ազգականների կամ անմիջական ժառանգների կողմից կամ էլ անգամ ներկայացվել նրանց կողմից անձի մահվանից մեկ տարի անց”:

Հոդված 786

2004թ. մարտի 9-ի թիվ 2004-204 օրենքով փոփոխություններով հանդերձ /ուժի մեջ է մտել 2005թ. հունվարի 1-ին/

“Լուրջ հանցագործության համար դատապարտված անձանց դեպքում արդարացման համար դիմում կարելի է ներկայացնել միայն հինգ տարի անց...

Այդ ժամանակը հաշվարկվում է Այն անձանց դեպքում, ովքեր պատիժ են ստացել ազատագրվումից, նրանց վերջնական ազատ արձակման օրվանից սկսած կամ 733-րդ հոդվածի երրորդ կետի դրույթների համաձայն՝ նրանց պայմանական ազատ արձակման օրվանից, եթե այն չեղյալ չի ճանաչվել...”

26. Քրեական հաշվառումից իրավախախտումը հանելու նորմերը հետևյալն են՝

Հոդված 769

“... Համաներմամբ մաքրված կամ չեղյալ հայտարարված դատվածությունների վերաբերյալ թղթապանակները պետք է հանվեն քրեական հաշվառումից...: Նույնը կիրառվում է.. դատվածությունների վերաբերյալ թղթապանակներին..., որոնք սահմանվել են ավելի քան քառասուն տարի առաջ, երբ քրեական հանցանքի որևէ տեսակի համար նոր դատվածություն չի եղել:

Հետևյալը նույնպես պետք է հանվի դատվածությունից՝

...

7. Դատապարտում, որի առնչությամբ իրավախախտը դատարանի որոշմամբ սանացիայի է ենթարկվել, որով դատարանն ուղղակիորեն կարգադրում է 798-րդ հոդվածի երկրորդ կետի համաձայն դատվածությունը հանել հաշվառումից”:

III. Համապատասխան միջազգային իրավունքը

Ա. Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը

27. Եվրոպայի խորհրդի 1981թ. Անհատական տվյալների մեքենայական մշակման մասնավոր անձանց պաշտպանության մասին կոնվենցիան /Տվյալների պաշտպանության կոնվենցիան/ “անհատական տվյալները” սահմանում է որպես տեղեկատվություն, որը վերաբերում է նույնականացված կամ նույնացվելու ենթակա անհատին: Կոնվենցիան, ի թիվս այլոց, նախատեսում է հետևյալը՝

“Նախաբան

...

Համարելով, որ ցանկալի է ընդլայնել յուրաքանչյուրի իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխիքները և, մասնավորապես, մասնավորությունը հարգելու իրավունքը, հաշվի առնելով մեքենայական մշակման ենթարկվող անհատական տվյալների ավելացող հոսքը սահմաններով.

...

Հոդված 5. Տվյալների որակը

Մեքենայական մշակման ենթարկվող անհատական տվյալները պետք է՝

...

բ/ պահեստավորվեն հատուկ և օրինական նպատակներով և չօգտագործվեն այդ նպատակների հետ անհամատեղելի ձևով.

գ/ լինեն համարժեք, տեղին և ոչ չափից ավելի այն նպատակներից, որոնց համար դրանք պահեստավորվել են.

...

ե/ պահպանվեն այն ձևով, որը թույլ է տալիս տվյալների առարկան նույնականացնել այդ տվյալները պահեստավորելու նպատակների համար պահանջվող ժամկետից ոչ ավելի:

Հոդված 6. Տվյալների հատուկ տեսակ

Ռասայական ծագումը, քաղաքական տեսակետները, կրոնական կամ այլ դավանանքները բացահայտող անհատական տվյալները, ինչպես նաև առողջությանը կամ սեռական կյանքին վերաբերող անհատական տվյալները չեն կարող մեքենայական մշակվել ենթարկվել, եթե ներպետական օրենքը համապատասխան երաշխիքներ չի նախատեսում:

...

Հոդված 7. Տվյալների անվտանգությունը

Պատահական կամ չթույլատրված ոչնչացումից կամ պատահական կորստից, ինչպես նաև չթույլատրված մուտքից, փոփոխությունից կամ տարածումից տվյալների մեքենայացված թղթապանակներում պահեստավորված անհատական տվյալների պաշտպանության համար պետք է ձեռնարկվեն անվտանգության պաշտաճ միջոցներ”:

28. Նախարարների կոմիտեի թիվ R (87) 15 հանձնարարականը, որով կարգավորվում է ոստիկանության ոլորտում անհատական տվյալների օգտագործումը /ընդունվել է 1987թ. սեպտեմբերի 17-ին/, ի թիվս այլոց, նախատեսում է հետևյալը՝

“Սկզբունք 2 – տվյալների հավաքումը

2.1. Ոստիկանության նպատակների համար անհատական տվյալների հավաքումը պետք է լինի այնքան, որքան որ հարկավոր է իրական վտանգը կանխելու կամ առանձնահատուկ քրեական հանցագործությունը ճնշելու համար: Սույն դրույթի որևէ բացառություն պետք է լինի կոնկրետ ազգային օրենսդրության առարկա:

...

Սկզբունք 3. Տվյալների պահեստավորումը

3.1. Ոստիկանական նպատակներով տվյալների պահեստավորումը պետք է հնարավորինս սահմանափակվի ճշգրիտ և այնպիսի տվյալներով, որոնք անհրաժեշտ են ոստիկանության մարմիններին թույլ տալու համար կատարել ազգային իրավունքի շրջանակում իրենց օրինական հանձնարարությունները և միջազգային իրավունքից բխող պարտականությունները:

...

Սկզբունք 7. Տվյալների պահեստավորման և թարմացման տևողությունը

7.1. Պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի ոստիկանական նպատակներով պահվող անհատական տվյալները ոչնչացվեն, եթե դրանք այլևս հարկավոր չեն այն նպատակների համար, որոնց համար պահեստավորվել էին: Այդ նպատակով հատուկ ուշադրություն պետք է դարձնել հետևյալ չափանիշներին՝ տվյալների պահպանման անհրաժեշտությունը հատուկ դեպքի վերաբերյալ հարցում անելու լույսի ներքո, վերջնական դատական որոշում, մասնավորապես, արդարացում, իրավունքների վերականգնում, նախկին դատվածությունը, համաներումները, տվյալների առարկայի տարիքը և տվյալների հատուկ տեսակներ”:

Բ. Համեմատական իրավունք

29. 2004թ. մարտին Ֆրանսիայի Հանրապետության Սենատը հրապարակեց թիվ 133՝ “Համեմատական իրավունքի ուսումնասիրությունը”, որը վերաբերում էր անչափահասների նկատմամբ կատարված սեռական բնույթի հանցագործությունների նկատմամբ վերաբերմունքին: Ձեկույցում նշված էր, որ “սեռական բնույթի հանցագործություններ կատարածների պաշտոնական ցուցակ կա միայն Անգլիայում և Ուելսում”: Գերմանիայում դաշնային ցուցակ չկա, սակայն երկու երկրամասում՝ Բավարիայում և Բրեմենում ցուցակներ կան: Բավարիայի ցուցակը, որը հայտնի է HEADS անվան տակ, մատչելի է միայն ոստիկանության պաշտոնյաներին և դատավորներին: Միացյալ Թագավորությունում ավելի քան երեսուն ամիս բանտարկության դատապարտված իրավախախտների վերաբերյալ տվյալները պահվում են անորոշ ժամանակով, և դրանք ոչնչացնելու որևէ հնարավորություն չկա /օրենք Սեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց մասին, 2003թ. 82-րդ բաժին/:

ՕՐԵՆՔԸ

I. ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՉՄՊԱՌԵԼՈՒ ԴԵՄ

30. Դիմողը բողոքում էր Սեռական բնույթի հանցագործություն կատարածների պաշտոնական ցուցակում իրեն ընդգրկելու դեմ, որի մասին նրան ծանուցել էին 2005թ. նոյեմբերի 22-ին: Նա հիմնվում էր Կոնվենցիայի 7-րդ հոդվածի վրա: Այդ բողոքը նույնպես Դատարանի բարձրագրած հարցերի առարկան էին, որոնք վերաբերում էին Կոնվենցիայի 8-րդ հոդվածին:
31. Կառավարությունն առարկում էր, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցներն սպառվել են: Այն մատնանշում էր, ինչպես հստակ կերպով նշված էր դիմողին տրված ծանուցման մեջ, որ վերջինս խախտման վերաբերյալ իր հայտարարությունների հիման վրա կարող էր ՔԴՕ-ի 706-53-10 հոդվածով նախատեսված ուղղման համար դիմել դատախազին:
32. Գանգատարկուի փաստարկներով այդ դրույթները չէին կարող մեկնաբանվել որպես ցուցակում իրեն ընդգրկելու դեմ իրավական պաշտպանության միջոց: Համապատասխանաբար, չէր կարելի ասել, որ այդ տարբերակը Սեռական բնույթի հանցագործություն կատարածների պաշտոնական ցուցակում ընդգրկվելու դեմ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց է:
33. Դատարանը նշում է, որ կառավարության ապավինած իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի վերաբերյալ հարց է ծագում: Կառավարությունը գանգատարկուի հետ համամիտ է, որ սխալն ուղղելու վերաբերյալ դիմումը զուտ հնարավորություն է տալիս ուղղել անձին վերաբերող մանրամասներում տեղ գտած հնարավոր հիմնական սխալները: Ինչ վերաբերում է օրենքով նախատեսված տեղեկությունների ոչնչացմանը, ապա ՔԴՕ-ի 706-53-4 և 706-53-10 հոդվածներից ակնհայտ է /տես վերը բերված 18 կետը/, որ դա ենթակա է ֆորմալ և հիմնական պայմանների, որոնք պետք է քննվեն ցուցակում ներառված անձանց տրվող՝ չարաշահումների և կամայականության դեմ երաշխիքների լույսի

ներքո: Դատարանը կարծում է, որ հարցի այս կողմն ավելի սերտորեն է կապված Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված բողոքի էության քննման հետ: Դատարանը նաև դիտողություն է անում, որ կառավարությունն այդ բողոքներից յուրաքանչյուրի ընդունելիության հետ կապված նոր առարկություններ է ներկայացրել, ուստի ինքը ստորև կքննի դրանց ընդունելիության հարցը:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

34. Դիմողը բողոքում էր Սեռական բնույթի հանցագործություն կատարածների պաշտոնական ցուցակում իրեն ընդգրկելու և 2004թ. մարտի 9-ի օրենքի հետադարձ կիրառության դեմ, որն ավելի շատ պարտավորություններ էր դնում իր առաջ, քան իր դատապարտման ժամանակ գոյություն ունեցածները՝ խախտելով 7-րդ հոդվածի առաջին կետը: Այդ դրույթն ասում է. «Ոչ ոք չի կարող մեղավոր ճանաչվել քրեական իրավախախտման համար որևէ գործողության կամ բացթողման համար, որն ազգային կամ միջազգային իրավունքի հիման վրա քրեական հանցագործություն չէր նշանակում դա կատարելու ժամանակ, ոչ էլ ավելի ծանր պատիժ պետք է նշանակվի, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործությունը կատարելու ժամանակ»:
35. Կառավարությունը վիճարկում էր, որ Դատարանն այս բողոքը քննելու համար չունի իրավախախտման օբյեկտի գործոնի իրավասություն: Ըստ կառավարության փաստարկի՝ Սեռական բնույթի հանցագործություն կատարածների պաշտոնական ցուցակում ընդգրկելը Դատարանի նախադեպային իրավունքի իմաստով «պատիժ» չէ՝ այն արդյունքով, որ 7-րդ հոդվածը կիրառելի չէր:
36. Կառավարությունը չէր վիճարկում այն փաստը, որ 2004թ. մարտի 9-ի օրենքն ուժի մեջ չէր էլ մտել, երբ իրավախախտումը կատարվել էր կամ երբ դիմողը դատապարտվել էր: Այնուամենայնիվ, կառավարությունը վիճարկում էր, որ այն միջոցը, որից բողոքում էր դիմողը, 7-րդ հոդվածի իմաստով «պատիժ» չէր կազմում և հետամուտ էր դա ցուցադրելու՝ հիշատակելով Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված չափանիշները, մասնավորապես, Ուելչն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը / 9 փետրվարի 1995թ., կետ 27, Series A, թիվ 307-A/ և Ջամիլն ընդդեմ Ֆրանսիայի գործը /8 հունիսի 1995թ., կետ 30, Series A թիվ 317-B/: Չնայած որ Դատարանը Ջամիլի գործով գտել էր, որ հեռակա կարգով բանտարկությունը պատիժ է, այն հիմքով, որ «պրն. Ջամիլի վրա դրված պատժամիջոցը կարգադրված է քրեական գործերով դատարանի կողմից, դրա նպատակը կանխարգելիչ էր և կրեեր ազատության պատժիչ զրկման» /կետ 32/: Դատարանը նաև որոշել էր, որ հատուկ վերահսկողությունը համեմատելի չի քրեական պատժամիջոցին, քանի որ դա նախատեսված է իրավախախտման կանխարգելման համար /հիշատակված էր Ռայմոնդոն ընդդեմ Իտալիայի գործը, 22 փետրվարի 1994թ., կետ 43, Series A, թիվ 281-A/: Կառավարությունը փաստարկում էր, որ հենց անվտանգության միջոցառումների նպատակն էլ դա էր, ներառյալ Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակում ընդգրկելը: Դրանք կարելի էր սահմանել որպես

սոցիալական պաշտպանության միջոցներ, որոնք նախատեսված են, որպեսզի մարդիկ օրենքը նորից չխախտեն կամ էլ վերացնեն վտանգի աղբյուրը: Դրանք հիմնված էին ոչ թե իրավախախտի մեղքի, այլ նրա ներկայացրած վտանգի վրա, ուստի Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակում ընդգրկելն իրականացվում էր որպես “անվտանգության միջոցառում” /ՔԴՕ-ի 706-53-5 հոդված/ և պատժամիջոց չէր: 706-53-2 հոդվածի 4-րդ կետով նախատեսված է անձի տվյալները ներառել ցուցակում անգամ այն դեպքում, երբ որոշում է կայացվել վարույթը կարճելու, շահագրգիռ անձին ազատելու կամ արդարացնելու մասին՝ Քրեական օրենսգրքի 122-1 հոդվածի առաջին կետի հիմքերով, որի համաձայն “այն անձինք, ովքեր իրավախախտումը կատարելու ժամանակ տառապում էին հոգեկան կամ ներոհոգեկան խանգարումից, որը նրանց զրկում էր իրենց գործողությունները հասկանալուց կամ վերահսկելուց, քրեական պատասխանատվության ենթակա չեն”:

37. Դիմողը փաստարկում էր, որ Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակում ընդգրկելը ենթադրում է օրենսդրությամբ սահմանված պարտավորություններ, որոնք իր դատապարտման ժամանակ գոյություն չունեին: Դա հավասարազոր էր ավելի ծանր պատժի, քան իրավախախտումը կատարելու ժամանակ կիրառվող միջոցը:
38. Դատարանը նկատում է, որ դիմողին ներառել են Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակում 2004թ. մարտի 9-ի օրենքն ուժի մեջ մտնելու արդյունքում: Նրա ընդգրկումն այդ ցուցակում տեղի է ունեցել դատապարտումից հետո: Նշված միջոցը զանգատարկուի համար ենթադրում էր պարտավորություն՝ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ապացույցներ ներկայացնել իր հասցեի վերաբերյալ և ամենաուշը տասնհինգ օրվա ընթացքում զեկուցել իր հասցեի փոփոխության մասին:
39. Դատարանը պետք է համոզվի՝ արդյոք Սեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակում ընդգրկելը Կոնվենցիայի 7-րդ հոդվածի առաջին կետով համարվում է “պատիժ”, թե այն միջոց է, որը դուրս է այդ դրույթի շրջանակից /տես Իբոթսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, հանձնաժողովի 1998թ. հոկտեմբերի 21-ի որոշում, թիվ 40146/98 և Ադամսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, թիվ 42293/98, 26 հունվարի 1999թ.՝ ցուցակում ընդգրկելու մասով և, համապատասխան փոփոխություններով, Վան դեր Վելդենն ընդդեմ Նիդերլանդների գործը, թիվ 29514/05, ECHR 2006-XV, զանգատարկուից վերցված ԴՆԹ-ի նմուշն իշխանությունների կողմից պահվելու մասով/:
40. Դրա հետ կապված Դատարանը հիշեցնում է, որ 7-րդ հոդվածում “պատժի” հասկացությունն ինքնուրույն բան է, ուստի Դատարանն ազատ է ուսումնասիրել դատարան ներկայանալը և իր համար գնահատել՝ արդյոք կոնկրետ միջոցն իր էությանմբ այդ դրույթի իմաստի շրջանակում հավասարազոր է պատժի: 7-րդ հոդվածի առաջին կետի երկրորդ

նախադասության ձևակերպումը ցույց է տալիս, որ պատժի գոյության գնահատման սկզբնական փուլում է, թե արդյոք նշված միջոցը պարտադրվում է քրեական հանցագործությունից հետո: Մրա հետ կապված համապատասխան գործոնները, որոնք կարելի է հաշվի առնել, նշված միջոցի բնութագրումն են ազգային օրենքներով, դրա բնույթն ու նպատակը, միջոցի ստեղծման ու իրականացման ընթացակարգերը և դրա խստությունը /տես վերը նշված Ուելչի գործը, 27 և 28 կետեր /:

41. Ներկա գործով Դատարանն առաջին հերթին նշում է այն հանգամանքը, որ ցուցակում դիմողին ներառելն, անշուշտ, 2003թ. հոկտեմբերի 30-ին նրա դատապարտման արդյունքն էր, քանի որ ցուցակում ներառելն ինքնաբերական է գանգատարկուի նման անձանց համար, ովքեր սեռական բնույթի հանցագործության համար ազատազրկվել են հինգ տարուց ավելի ժամկետով:
42. Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրության մեջ իրավական բնութագրին, Դատարանը նկատում է, որ ըստ Սահմանադրական խորհրդի՝ նշված միջոցն ավելի շուտ հասարակական կարգի միջոց է, քան պատժամիջոց և ՔԴՕ-ի 706-53-1 հոդվածի անվիճելի դրույթների համաձայն այդ ցուցակը նախատեսված է, որպեսզի սեռական բնույթի կամ բռնությամբ ուղեկցված հանցագործություններ կատարած անձանց կանխեն օրենքը նորից խախտելուց և ապահովեն, որ նրանց նույնականացնեն ու հետևեն /տես վերը նշված 18 և 19 կետեր/:
43. Ինչ վերաբերում է այն միջոցի նպատակին ու բնույթին, որի վերաբերյալ բողոք է ներկայացված, Դատարանը նշում է, որ դիմողը համարում է, որ իր վրա դրված նոր պարտավորությունը պատժիչ է: Այնուամենայնիվ, Դատարանը կարծում է, որ այդ պարտավորության հիմնական նպատակը օրենքը վերստին խախտելը կանխելն է: Այդ առումով Դատարանը կարծում է, որ այն փաստը, որ դատապարտված հանցագործի հասցեն հայտնի է ոստիկանությանը կամ ժանդարմերիային և դատական մարմիններին ցուցակում նրա ներառման շնորհիվ, զսպող միջոց է և դյուրացնում է ոստիկանական քննությունը, ուստի այդ ցուցակում ընդգրկելուց բխող պարտավորությունն ունի կանխարգելիչ և զսպիչ նպատակ և չի կարող իր բնույթով համարվել պատժիչ կամ պատիժ նշանակել:
44. Բացի այդ, Դատարանը նշում է, որ չնայած դիմողն այդ պարտավորությունը չկատարելու դեպքում կազատազրկվեր երկու տարով և կվճարեր 30,000 եվրո տուգանք, կսկսվեր դատավարությունների մի նոր փուլ, որն ամբողջովին անկախ է 2003թ. հոկտեմբերի 30-ին նրան դատապարտած դատավարությունից, որի ժամանակ իրավասու դատարանը կգնահատեր՝ արդյոք դրանք չկատարելը դատապարտման ենթակա է, թե ոչ /տես, ընդհակառակը, վերը բերված Ուելչի գործը, կետ 14/:
45. Եվ, վերջինը, ինչ վերաբերում է միջոցի խստությանը, Դատարանը կրկնում է, որ սա ինքնին վճռորոշ չէ /տես վերը բերված Ուելչի գործը, կետ 32/: Ամեն դեպքում, Դատարանը կարծում է, որ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ հասցեի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելը և ամենաուշը տասնհինգ օրվա ընթացքում հասցեի փոփոխության մասին

հայտարարություն տալը բավականաչափ խիստ չէ, որպեսզի համարվի “պատիժ”:

46. Այս բոլոր նկատառումների լույսի ներքո Դատարանն այն կարծիքին է, որ Մեռական բնույթի հանցագործություն կատարած անձանց ցուցակում ներառելը և դրանից բխող պարտավորությունները Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով հավասարազոր չեն պատժի և պետք է համարվեն կանխարգելիչ միջոց, որին այդ դրույթում ամրագրված սկզբունքը, այսինքն՝ որ օրենքը չպետք է հետադարձ ուժ ունենա, չի կիրառվում:
47. Համապատասխանաբար Կոնվենցիայի 7-րդ հոդվածի հիման վրա գանգատարկուի բողոքը պետք է մերժվի որպես Կոնվենցիայի դրույթների հետ անհամատեղելի օբյեկտի գործոն՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

48. Կոնվենցիայի 7-րդ հոդվածի հիման վրա ներկայացված բողոքը դարձավ Դատարանի հարցերի պատճառ, որոնք վերաբերում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածին, որի համապատասխան մասերում նախատեսված է հետևյալը՝

“1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք:

2.2ի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով”:

Ա. Կողմերի փաստարկները

49. Կառավարությունը հենց սկզբից շեշտում էր, որ դիմողն իր սկզբնական դիմումում հստակ կերպով չէր բարձրացրել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վրա հիմնված բողոքը: Այդուհանդերձ, եթե Դատարանը ցանկանա գործը քննել 8-րդ հոդվածի տեսանկյունից, կառավարությունը փաստարկում էր, որ Ֆրանսիայի իշխանությունները չէին խախտել այդ դրույթը:
50. Կառավարությունն ընդգծում էր, որ չի կարելի ասել, որ ցուցակում ընդգրկելու արդյունքում գանգատարկուի վրա դրված հարկադրանքը միջամտություն է նրա անձնական ու ընտանեկան կյանքին, քանզի այն սահմանափակված է ՔԴՕ-ի 706-53-5 հոդվածում ամրագրված պահանջներով /տես վերը բերված 18-րդ կետը/:
51. Կառավարությունը վիճարկում էր, որ նշված միջոցն իրոք ունի իրավական հիմք՝ 2004թ. մարտի 9-ի օրենքը, որը մանրամասն շարադրում է Մեռական բնույթի հանցագործություններ կատարածների պաշտոնական ցուցակում

շահագրգիռ անձանց ներառելու ենթադրությունները: Միջոցը միտված էր կանխարգելելու անկարգություններն ու հանցագործությունները, մասնավորապես, անչափահասների նկատմամբ /ՔԴՕ-ի 706-53-1 հոդվածը/:

52. Եվ, վերջինը, կառավարությունը փաստարկում էր, որ սեռական բնույթի հանցագործությունները կանխարգելելու հարցում հասարակության շահը պետք է համեմատվի մասնավոր կյանքի նկատմամբ զանգատարկուի իրավունքի խախտման հետ: Կառավարության կարծիքով այդ ցուցակի ստեղծումը սեռական բնույթի հանցագործությունները կարգավորող հատուկ նորմերի ամբողջությունն աստիճանաբար ներկայացնելու մի մասն էր, որն արդարացված է համեմատաբար վերջերս ավելացված իրազեկվածությամբ, որը վերաբերում է այդպիսի իրավախախտումների հատուկ բնույթին: Վերջինը բխում է այն փաստից, որ այդ իրավախախտները հաճախ ունեն անհատականության հետ կապված խանգարումներ, որոնք օրենքը նորից խախտելու իրական գործոն են, և տուժածներին պատճառված հատուկ տառապանքներից, հատկապես եթե նրանք հանցագործության ժամանակ անչափահաս են եղել: Այդ պատճառով ազգային իշխանությունները գործարկել էին պատժիչ և կանխարգելիչ միջոցների համակցումը: Սեռական բնույթի հանցագործություն կատարածների պաշտոնական ցուցակի ստեղծումն այդ առումով միտված էր լրացնելու այն բացը, որ կար սեռական բնույթի հատկապես լուրջ հանցագործությունների կանխարգելման համակարգում: Կառավարությունն ավելացրել էր, որ Դատարանի նախադեպային իրավունքից պարզ էր, որ Դատարանը չի վիճարկում պետությունների իրավունքը իրավախախտումները կանխարգելելու, անհատական տվյալներ հավաքելու և պահեստավորելու հարցում՝ պայմանով, որ “կային համարժեք ու արդյունավետ երաշխիքներ բռնության դեմ” /վկայակոչվում էր Լեանդերն ընդդեմ Շվեդիայի գործը, 26 մարտի 1987թ., կետ 60, Series A թիվ 116/:
53. Ներկա գործում կառավարության փաստարկների համաձայն՝ դիմողն օգտվել էր օրենքով նախատեսված բոլոր երաշխիքներից: Դատական մարմինը նրան տեղեկացրել էր ցուցակում ընդգրկելու մասին, որը վերահսկվում էր դատավորի կողմից: Դա ազդեցություն էր ունեցել միայն այն անձանց վրա, ովքեր կատարել էին վերը նշված օրենսգրքի 706-47 հոդվածում վկայակոչված սեռական բնույթի լուրջ հանցագործությունները, և միայն այդ հանցագործությունների պատճառով նրանք ինքնաբերաբար ընդգրկվել էին ցուցակում:
54. Ինչ վերաբերում է օրենքով նախատեսված երաշխիքներին, կառավարությունը մատնանշում էր, որ տեղեկատվությունը պահելու ժամկետը՝ քսանից երեսուն տարի, կախված է հանցագործության լրջությունից: Սա առավելագույն ժամկետն էր, իսկ շահագրգիռ անձինք կարող էին պահանջել, որպեսզի իրենց վերաբերող տեղեկությունները ցուցակից ջնջվեն: Այդ պահանջը կարելի է ներկայացնել երեք մարմնի՝ դատախազին, ազատությունների և կալանավորման գծով դատավորին և հետաքննությունների բաժանմունքի ղեկավարին: Այս եռաճյուղ մոտեցումը եռակի երաշխիքներ է տալիս: Ներկա գործում այն փաստը, որ

զանգատարկուի դատապարտումը ներառվել է նրա դատվածության մեջ, անընդունելի է դարձնում ցուցակում եղած տեղեկատվության ոչնչացման մասին պահանջը: Սակայն դիմողը տարբերակ ունեւր՝ դիմել դատական կարգով արդարացման համար, որը դատապարտումը կմաքրեր դատվածությունից: Ավելին, ցուցակից կարող են տեղեկություններ ստանալ միայն որոշակի մարմիններ, որոնք ունեն գաղտնիությունը պահպանելու պարտավորություն և հստակ կերպով սահմանված հանգամանքներում: Եվ, վերջինը, ցուցակի տվյալները հնարավոր չէր համեմատել այլ տեղերում պահվող տվյալների հետ:

55. Կառավարությունը եզրակացրեց, որ ցուցակում ներառելուն կից երաշխիքներն այնպիսին են, որ դա հավասարազոր էր Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստի շրջանակում ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ միջամտության:
56. Գանգատարկուի կարծիքով, ցուցակում պարունակվող տեղեկությունները հանրային սպառման համար չեն: Օրենսդրությամբ պարտադրված հարկադրանքները նվազագույնը չէին, սակայն սահմանափակում էին դատապարտյալի տեղաշարժի ազատությունը:

Բ. Դատարանի գնահատականը

57. Դատարանը կրկնում է, որ քանի որ ինքն օրենքում այս գործի փաստերին տրվող բնութագրի տերն է, դիմողի կամ կառավարության տված բնութագրով ինքն իրեն կաշկանդված չի համարում: “Դատարանը գիտի օրենքը” սկզբունքի շնորհիվ իր իսկ նախաձեռնությամբ կարող է քննել այն զանգատները, որոնք նախատեսված են այն հոդվածներով կամ կետերով, որոնց վրա Դատարանում հանդես եկողները չեն հիմնվում: Այլ կերպ ասած, զանգատը բնութագրվում է դրանում մեջբերված փաստերով, ոչ թե այն իրավական հիմքերով կամ փաստարկներով, որոնց վրա հիմնվում են /տես Գուերրան և մյուսներն ընդդեմ Իտալիայի գործը, 19 փետրվարի 1998թ., կետ 44, Հաշվետվություններ դատավճիռների և որոշումների մասին 1998-I, Բերկթայն ընդդեմ Թուրքիայի գործը, թիվ 22493/93, կետ 168, 1 մարտի 2001թ./, հետևաբար կառավարության առարկությունն ընդդեմ անընդունելիության պետք է մերժվի:

Դատարանը նշում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետով այս զանգատն ակնհայտ անհիմն չէ: Դատարանը նաև նշում է, որ զանգատը որևէ հիմքով անընդունելի չէ, ուստի պետք է ճանաչվի ընդունելի:

58. Ինչ վերաբերում է մնացածին, ապա Դատարանը դիտարկում է, որ Մեռական բնույթի հանցագործություններ կատարած անձանց պաշտոնական ցուցակում կան տվյալներ, որոնք վերաբերում են զանգատարկուի անձնական կյանքին: Ցուցակը գտնվում է Արդարադատության նախարարության պատասխանատվության ներքո և վերահսկվում դատվածությունների գրանցումը վարող դատավորի կողմից: Դատարանն ընդգծում է, որ այս փուլում իր խնդիրը չէ խորհել հավաքված տեղեկատվության զգայուն բնույթի կամ այլ բանի շուրջ կամ էլ զանգատարկուի կրած հնարավոր դժվարությունների մասին: Իր

նախադեպային իրավունքի համաձայն՝ պետական մարմնի կողմից անհատի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվության պահեստավորումը 8-րդ հոդվածի իմաստով հավասարագոր է միջամտության: Պահեստավորված տեղեկատվության հաջորդող գործածությունը որևէ ազդեցություն չունի այդ եզրակացության վրա /տես անհրաժեշտ փոփոխություններով վերը նշված Լեանդերի գործը, կետ 48 և Կոպպն ընդդեմ Շվեյցարիայի գործը, 25 մարտի 1998թ., կետ 53, Հաշվետվություններ 1998-II/: Ավելի կոնկրետ, Դատարանն արդեն որոշում է կայացրել, որ սեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտված անձանցից ոստիկանությանն իրենց անվան, ծննդյան օրվա, հասցեի կամ դրա փոփոխության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման վերաբերյալ պահանջը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակում է /տես վերը նշված Ադամսոնի գործը/:

59. Դատարանը նկատում է, որ կողմերը չեն վիճարկում այն հանգամանքը, որ նշված միջամտությունը եղել էր օրենքի համաձայն և հետապնդում էր օրինական նպատակ՝ կանխել անկարգությունն ու հանցագործությունը /նույն տեղում/, ուստի ինքը պետք է քննի՝ արդյոք միջամտությունն անհրաժեշտ էր Կոնվենցիայի պահանջների տեսանկյունից:
60. Քանի որ ազգային իշխանությունները նախնական գնահատում են իրականացնում՝ որտեղ է գործի նպաստավոր հավասարակշռությունը մինչ Դատարանի վերջնական գնահատականը, սկզբունքորեն Դատարանն այդ գնահատականի վերաբերյալ իշխանություններին համաձայնություն է տալիս հայեցողության որոշակի շրջանակի հարցում: Այդ շրջանակի չափը տարբեր է և կախված է մի շարք գործոններից, ներառյալ սահմանափակված գործունեության բնույթը և այդ սահմանափակումների հետապնդած նպատակները /տես Սմիթը և Գրոյդին ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, թիվ 33985/96 և 33986/96, կետ 88, ECHR 1999-VI/:
61. Համապատասխանաբար, որտեղ վտանգված է անհատի գոյության կամ ինքնության հատկապես կարևոր կողմը, պետությանը տրված հայեցողության շրջանակն ընդհանուր առմամբ կսահմանափակվի:
62. Անհատական տվյալների պաշտպանությունը հիմնարար նշանակություն ունի Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական ու ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի իրականացման համար, ուստի ներպետական օրենքը պետք է համապատասխան երաշխիքներ տրամադրի անհատական տվյալների այնպիսի օգտագործումը կանխելու համար, որն անհամատեղելի չի լինի այդ հոդվածի երաշխիքների հետ /տես համապատասխան փոփոխություններով Զ-ն ընդդեմ Ֆինլանդիայի գործը, 25 փետրվարի 1997թ., կետ 95, Հաշվետվություններ 1997-I/: Ս-ն և Մարփերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործի, (GC), թիվ 30562/04 30566/04, կետ 103, ECHR 2008, վերաբերյալ իր կատարած եզրակացությունների հետ համապատասխան՝ դատարանն այն կարծիքին է, որ այդպիսի երաշխիքների անհրաժեշտությունը շատ ավելի մեծ է, երբ խոսքը գնում է մեքենայական մշակման ենթարկվող անհատական տվյալների պաշտպանության մասին՝ ոչ վերջին հերթին, երբ այդ տվյալներն օգտագործվում են ոստիկանական նպատակներով: Ներպետական

օրենսդրությունը պետք է ապահովի, որպեսզի այդ տվյալներն լինեն տեղին և ոչ չափից ավելի այն նպատակների համեմատ, որոնց համար դրանք պահեստավորվում են և պահպանվեն այն ձևով, որը թույլ է տալիս տվյալների սուբյեկտի նույնականացումը ոչ ավելի ժամանակով, քան պահանջվում է պահեստավորված տվյալների նպատակի համար /տես Տվյալների պաշտպանության կոնվենցիայի 27 և 28 կետերը, մասնավորապես 5-րդ հոդվածը և կոնվենցիայի նախաբանը, ուստի կանական համակարգում անհատական տվյալների օգտագործումը կարգավորող՝ Նախարարների կոմիտեի R /87/ 15 հանձնարարականի 7-րդ սկզբունքը/: Ներպետական օրենքը պետք է նաև համարժեք երաշխիքներ ապահովի, որպեսզի անհատական տվյալներն արդյունավետ կերպով պաշտպանված լինեն սխալ օգտագործումից և չարաշահումից:

63. Դատարանը չի կարող վիճարկել ցուցակի կանխարգելիչ նպատակները, օր.՝ այն, որում ներառվել էր դիմողն անչափահասին բռնաբարելու համար տասնհինգ տարվա բանտարկության դատապարտվելուց հետո: Այդ ցուցակի նպատակը, ինչպես Դատարանն արդեն իսկ նշել է, հանցագործությունը կանխելն է, մասնավորապես, կրկնահանցագործության դեմ պայքարը և այդպիսի դեպքերում հանցագործների նույնականացումը դյուրացնելը: Անտարակույս, սեռական բռնությունն իրավախախտման ամենագարշելի տեսակն է, որը խարխլում է տուժածների առողջությունն ու ուժերը: Երեխաներն ու մնացած խոցելի անձինք ունեն իրենց անձնական կյանքի էական կողմերի վրա միջամտության այդպիսի ծանր տեսակներից պետական պաշտպանության իրավունք՝ արդյունավետ կանխարգելման տեսքով /տես Սթաբինգգն ու մյուսներն ընդդեմ Միացյալ Թագավորություն գործը, 22 հոկտեմբերի 1996թ., կետ 64, Հաշվետվություններ 1996-IV/:
64. Միաժամանակ եվրոպական քրեական քաղաքականությունը զարգանում է և պատժի հետ մեկտեղ մեծացող կարևորություն է տալիս բանտարկության վերականգնողական նպատակին, մասնավորապես երկարաժամկետ բանտարկության վերջում /տես Դիքսոնն ընդդեմ Միացյալ Թագավորության գործը, (GC), թիվ 44362/04, կետ 75, ECHR 2007-V/: Հաջողված արդարացումը, ի թիվս այլ բաների, նշանակում է կանխարգելել օրենքը նորից խախտելը /տես Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը, որը հիշատակված է Լեժեն ընդդեմ Ֆրանսիայի գործում, թիվ 19324/02, կետ 49, ECHR 2006-.../:
65. Ներկա գործով դիմողին ինքնաբերաբար մտցրել էին ցուցակի մեջ 2004թ. օրենքի անցումային դրույթների հիման վրա՝ նկատի ունենալով այն հանցագործությունը, որի համար նա վերջնականապես դատապարտվել էր: Նա պատշաճ կերպով ծանուցվել էր ցուցակում ներառվելու մասին և ի գիտություն ընդունել իր վրա դրված պարտավորությունները:
66. Ինչ վերաբերում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ հասցեի և դրա փոփոխության վերաբերյալ ապացույց ներկայացնելու պարտավորությանը, ի պատիժ բանտարկությամբ ազատազրկման և տուգանքի վճարման, Դատարանը նախկինում որոշել էր, որ դա չի հանգեցնի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի տեսակետից որևէ հարցի /տես վերը նշված Ադամսոնի գործը/:

67. Ինչ վերաբերում է տեղեկությունները պահելու ժամկետին, Դատարանը նշում է, որ դա կամ քսան տարի է, կամ երեսուն՝ կախված պատժի խստությունից:
68. Ինչպես նշել է կառավարությունը, սրանք առավելագույն ժամկետներն են: Չնայած այս դեպքում երեսուն տարին զգալի է, Դատարանը դիտարկում է, որ այդ ժամկետը լրանալուց հետո տվյալներն ինքնաբերաբար ոչնչացվում են, իսկ դա սկսվում է, երբ ցուցակում ներառելու մասին որոշումը դադարում է ուժ ունենալուց: Դատարանն այնուհետև նշում է, որ շահագրգիռ անձը կարող է դիմել դատախազին, որպեսզի իրեն վերաբերող տվյալները ոչնչացվեն, եթե այդ տվյալները պահպանելն այլևս հարկավոր չի՝ նկատի ունենալով ցուցակի նպատակը՝ հաշվի առնելով հանցագործության բնույթը, հանցագործությունը կատարելու պահին շահագրգիռ անձի տարիքը, դրանից հետո անցած ժամանակը և անձի ներկա անհատականությունը /տես վերը նշված 18 կետը, ՔԴՕ-ի 706-53-10 հոդվածը/: Դատախազի որոշումը կարող է բողոքարկվել ազատությունների և կալանքի գծով դատավորի, ապա՝ հետաքննության բաժնի ղեկավարի մոտ:
69. Դատարանը կարծում է, որ տվյալների ոչնչացման այդ դատական ընթացակարգը նախատեսում է տեղեկատվության պահման արդարացման ինքնուրույն վերանայում՝ սահմանված չափանիշների համաձայն /տես վերը նշված Ս-ի և Մարփերի գործը, կետ 119/ և թույլ է տալիս ունենալ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի համարժեք ու արդյունավետ երաշխիքներ՝ հաշվի առնելով ցուցակում ներառելու պատճառ դարձած հանցագործությունների լրջությունը: Իհարկե, այդքան երկար ժամանակով տվյալների պահեստավորումը հարց է առաջացնում՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմքերով, սակայն Դատարանը նշում է, որ ամեն դեպքում դիմողը գործնական հնարավորություն ունի պահեստավորված տվյալները ոչնչացնելու հայց ներկայացնել այն օրվանից, երբ ցուցակում ներառելու պատճառ դարձած որոշումը դադարում է ուժ ունենալ: Այդ հանգամանքներում Դատարանն այն կարծիքին է, որ այն ժամկետը, որի ընթացքում տվյալները պահպանվում են, անհամաչափ չէ տեղեկատվությունը պահեստավորելու նպատակին:
70. Ինչ վերաբերում է ցուցակի գործածությանը և պետական մարմինների շրջանակին, որոնք մուտք ունեն դեպի այդ ցուցակը, Դատարանը նշում է, որ վերջինս մի քանի առիթներով ընդլայնվել է և այլևս չի սահմանափակվում դատական մարմիններով ու ոստիկանությամբ՝ վարչական մարմինները հիմա նույնպես մուտք ունեն դեպի այդ ցուցակ /ՔԴՕ-ի 706-53-7 հոդված, տես վերը նշված 18 կետը/: Այնուամենայնիվ, փաստն այն է, որ ցուցակից կարող են տեղեկություններ ստանալ միայն այն մարմինները, որոնք սահմանափակված են գաղտնիության պարտականությամբ և հստակ կերպով սահմանված հանգամանքներում: Ի լրումն դրա, ներկա գործը ինքն իրեն իրավունք չի տալիս կոնկրետ կերպով քննել վարչական նպատակներով տեղեկություններ ստանալու՝ ցուցակի հասանելիությունը:

71. Վերջում Դատարանը կարծում է, որ Սեռական բնույթի հանցագործություն կատարածների պաշտոնական ցուցակում դիմողին ներառելը նպաստավոր հավասարակշռություն է մտցրել վտանգված մասնավոր ու հանրային մրցակցային շահերի միջև, և պատասխանող պետությունն այդ առումով չի անցել հայեցողության ընդունելի շրջանակը: Համապատասխանաբար, ներկա գործով Կոնվենցիայի 8-րդ հոդվածը չի խախտվել:

III. ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

72. Հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ, 13-րդ, 14-րդ և 17-րդ հոդվածների վրա՝ դիմողը, ով հայտարարում էր, որ ինքն անմեղ է, բողոքում էր իր գործի քննության կարգից, այն փաստից, որ քննչական միջոցների և փորձագիտական եզրակացությունների վերաբերյալ իր պահանջները մերժվել էին հետաքննող դատավորի կողմից, ինչպես նաև կրկնական քննություն անցկացնելու մասին իր դիմումի մերժումը Քրեական գործերի վերանայման խորհրդի կողմից: 2005թ. նոյեմբերի 3-ի նամակում նա բողոքում էր նաև իր դատավճռի ի կատար ածումը հետաձգելու մասին դիմումը մերժելուց՝ փաստարկելով, որ իր առողջական վիճակն անհամատեղելի է կալանքի հետ: Եվ, վերջինը՝ 2005թ. դեկտեմբերի 5-ի նամակում դիմողը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիման վրա հայտարարում էր, որ իր շարունակվող կալանքը հավասարազոր է խոշտանգման:

73. Հաշվի առնելով իր տրամադրության տակ եղած բոլոր ապացույցները և, այնքանով, որքանով որ այդ բողոքները քննելու իրավասություն ինքն ունի, Դատարանը գտնում է, որ խախտված չեն այն իրավունքներն ու ազատությունները, որոնք երաշխավորված են այն դրույթներով, որոնց վրա հիմնվում են: Ուստի Դատարանը կարծում է, որ այդ բողոքները բացահայտորեն անհիմն են Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստի շրջանակում և 35-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն պետք է մերժվեն:

ԱՅԴ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶՄԱՅՆ՝

1. հայտարարում է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածին վերաբերող բողոքն ընդունելի է, իսկ դիմումի մնացած մասը՝ անընդունելի.
2. որոշում է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը չի խախտվել:

Կազմված է ֆրանսերեն լեզվով և գրավոր կերպով ծանուցված 2009թ. դեկտեմբերի 17-ին՝ Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն:

Կլաուդիա Վեստերդիկ
Քարտուղար

Փիր Լորենցեն
Նախագահ

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2012թ. կամ եկող տարի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պաշտոնական լեզուներն են անգլերենն ու ֆրանսերենը: Սույն թարգմանությունը պատվիրված է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների տրաստային հիմնադրամի աջակցությամբ (www.coe.int/humanrightstrustfund): Դատարանը թարգմանության համար պարտավորություն չի ստանձնում և որակի համար որևէ պատասխանատվություն չի կրում: Թարգմանությունը կարելի է ներբեռնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի HUDOC-ի նախադեպային իրավունքի (<http://hudoc.echr.coe.int>) կամ տվյալների այլ շտեմարանից, որի հետ Դատարանը դրանով կիսվել է: Թարգմանությունը

կարելի է վերարտադրել ոչ առևտրային նպատակներով՝ պայմանով, որ մեջբերվի գործի ամբողջական վերնագիրը՝ վերը բերված հեղինակային իրավունքի մասին նշումով և հղում անելով Մարդու իրավունքների տրաստային հիմնադրամին: Եթե մտադրություն կա թարգմանության որևէ մասն օգտագործել առևտրային նպատակներով, դիմել հետևյալ հասցեով՝ publishing@echr.coe.int:

© Council of Europe/European Court of Human Rights

The official languages of the European Court of Human Rights are English and French. This translation was commissioned with the support of the Human Rights Trust Fund of the Council of Europe (www.coe.int/humanrightstrustfund). It does not bind the Court, nor does the Court take any responsibility for the quality thereof. It may be downloaded from the HUDOC case-law database of the European Court of Human Rights (<http://hudoc.echr.coe.int>) or from any other database with which the Court has shared it. It may be reproduced for non-commercial purposes on condition that the full title of the case is cited, together with the above copyright indication and reference to the Human Rights Trust Fund. If it is intended to use any part of this translation for commercial purposes, please contact publishing@echr.coe.int.

© Conseil de l'Europe/Cour européenne des droits de l'homme, 2012

Les langues officielles de la Cour européenne des droits de l'homme sont le français et l'anglais. La présente traduction a été effectuée avec le soutien du Fonds fiduciaire pour les droits de l'homme du Conseil de l'Europe (www.coe.int/humanrightstrustfund). Elle ne lie pas la Cour, et celle-ci décline toute responsabilité quant à sa qualité. Elle peut être téléchargée à partir de HUDOC, la base de jurisprudence de la Cour européenne des droits de l'homme (<http://hudoc.echr.coe.int>), ou de toute autre base de données à laquelle HUDOC l'a communiquée. Elle peut être reproduite à des fins non commerciales, sous réserve que le titre de l'affaire soit cité en entier et s'accompagne de l'indication de copyright ci-dessus ainsi que de la référence au Fonds fiduciaire pour les droits de l'homme. Toute personne souhaitant se servir de tout ou partie de la présente traduction à des fins commerciales est invitée à le signaler à l'adresse suivante : publishing@echr.coe.int